զայլն Սարգսի: Ով խափանէ զ-
վերագրեալ՝ նզովսն առցէն»:
(«Սանահինի...», Կարօ Ղաֆադարեան, էջ 174):

Թ Ի Ւ 4

«(Սանահինի) Մեծ կամ Աստուածածնի գաւիթ: Մեծ գաւթի միջին թաղի հարաւային մասում»·

«Ի թու(ին) ՈԿԴ (1215)
ես՝ Կոստանդ, որդի Գրիգորո, թոռն (Համազ)ասպենց, եկի Սանահինս, եւ մեծաւ յուսով ետու յԱ(ստուա)ծածնիս զ(արդխնս) վասն հոգոյ իմոյ իմ հայրենեցն: Եւ առաջնորդ ս(ուր)բ ուխտիս եւ (միաբ)անքս ընկալան եւ հա(ս)տատեց(ին)... աւ տան զս(ուր)բ ծա(ռզարդարին) ամէն եկեղեցիք· ինձ պատար(ագել զ)Ք(րիստո)ս (մ)ինչ ի կատարած աշ(խարհի: Որ) զիմ յոյս խափանէ, Յուդա եւ ս(ա)տանա եղից(ի)...: Առա–
ջնորդք ս(ուր)բ ուխտիս հ(այր Փիլիպոս եւ վար)դապետ Գրիգոր եւ գլուխ տանն տերունի վարդա(պետաւքս եւ միաբ)անաւքս (հա)–
ստատեցաք զխնդիր(ն Կոստանդի): Ով խափանէ նզոված է»:
(«Սանահինի...», Կարօ Ղաֆադարեան, էջ 121):

Թ Ի Ւ 5

Սանահինի «Գրատան նախադռան հիւսիսային պատին»·

«Ի թուին Չ (1251): Կամաւն Ա(ստուծո)յ, ես՝
Գրիգոր իշխան միաբանեց-
ա ս(ուր)բ ուխտիս Սանահնիս, Աւէտի-
ս վ(ար)դ(ապետ) եւ միաբանքս ետուն մեզ
Բ(2) պատարագ ի տաւնի Տրդատա Թ(ա)գ(աւոր)ի:
Որ խափանէ դատի ի տ(եառն)է»:
(«Սանահինի...», Կարօ Ղաֆադարեան, էջ 153):

Թ Ի Ւ 6

Շիքակոյի (Միացեալ Նահանգներ) Համալսարանը պահուող Կարմիր Աւետարանին մէջ վատ գրչութեամբ, գրեթէ չեղագիր կայ հետեւեալ դժուարընթեռնելի գրութիւնը, որմէ տող մը, թերթին վերի մասին կտրուածին պատճառաւ, թերի է, իսկ կախման կէտերով մասերը կը պակսին·

«. . . . . . . . . . . . . .
ու մարծպանս Մամիկոն...
րված չիկայհարա ա(ստուա)ծածին
որ էս որ առաջ եղել մէջում յարկ
ից զէս եկեղեցիս ընդ խորանի
ին արարեալ արդ մեք զէս խոստացէք
...գչեկահարոյ ա(ստուա)ծածինն ետ
յիւր հոգովն ի ծարխանորորաք(?) եւ ամ(ի)
զսպասաւորք եկեղեցոյս Դ(4) աւր ժամ ջ...
ին ա(1) աւրն հաւր մերոյ հասանայ եւ ...
աւրն եղբաւր մերոյ սեւադէի եւ
Բ(2) աւրն մաւր մերոյ Մամխաթու(նին):
Արդ թէ յիմոց կամ յաւտարաց
կամ ելազգեց զէս գիրս խափանել